ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 243-19
14 մայիս 2019թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-082-0023-0013 կադաստրային ծածկագրով տնատիրության և կից հողամասի նկատմամբ Արայիկ Վանիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 112-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կապ.՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 112-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-082-0023-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՅԻԿ ՎԱՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը (2019 թվականի ապրիլի 03-ի գործ թիվ ԼԴ3/0378/02/18), քաղաքացի Արայիկ Վանիկի Գրիգորյանի (նույնականացման քարտ՝007398365, տրված՝ 02.05.2016 թվականին, 039-ի կողմից) դիմումը, <<Գ. ՎԵԼԻՔՅԱՆ>> ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրինական հատկացված 0.24361 հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (1970-1975թթ.)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի ուժով ճանաչել Արայիկ Վանիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 06-082-0023-0013 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0.24361 համակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի չափերը որոշվում են Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված և <<Գ. ՎԵԼԻՔՅԱՆ>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագծով:

3.Ճանաչել Արայիկ Վանիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 06-082-0023-0013 կադաստրային ծածկագրով 0.24361 հա հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ համաձայն <<Գ. ՎԵԼԻՔՅԱՆ>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ.Նորաշեն, փողոց Կ.Դեմիրճյան, տուն 46:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմունքում:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. մայիս 10
գ.Սարչապետ